

ու կը կոչուէին երգեցիկը (Սիր. Գ, 4. Ժող. Բ, 8): — Եւ որովհետեւ խնճոյից մէջ անպակաս էին նաեւ «կաքաւք լկտու թեան» (Եղիշ. 52) կամ «պարք» (Գր. վրդ. աստ, 204), մեր վարձակներն հարկաւ իրենց ոտներու ժրութիւնն ալ կը ցուցադրէին այդ տեղ եւ այդպիսի պարերու մէջ, դառնալով կաքաւիչք (Ոսկ. թղթ. Ա, 67, 468), խաղալիկք (Ա. թագ. ժԸ, 8. Երմ. ԼԱ, 4) կամ պարաւորք (Գատ. ԻԱ, 23. Ա. թագ. ժԸ, 6): Գագիկ արծրունի՝ Աղթամարայ մէջ կառուցած ուրախութեան յատուկ ոսկեգմբեթ փառաւոր տաճարին որմոց վրայ շոայլած էր խրախճանական տեսարաններ, ուր արքայն բազմած ոսկեզարդ գահոյից վրայ, շրջապատուած էր մատուակներէ ու գուսաններէ, եւ անոնց մէջ նաեւ «խաղս աղջկանց զարմանալոյ արժանիս» (Արծ. 332): Վարձակաց երգերն ու պարերն անպակաս էին նաեւ Հոովմայեցոց (Գար. Ա, 1374), Հրէից (Բ. թագ. ժԹ, 35. Մտթ. ժԴ, 6), Անտիոքացոց (Ոսկ. Մտթ. Ա, 687) եւ այլոց մէջ. եւ «փափկասուն աղջկանց եւ մանկանց» երգերը կը հնչէին մեր դրացի Պարսից խրախութեանց մէջ եւս (Կաղ. 101):

Գ. Բոզերոս անգամ կը պատահինք հայ տաճարաց մէջ, որոնք համարձակ եւ հան-